ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՂ-ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆԵՐԸ

(Մ. Արազու ծննդյան 80-ամյակի առթիվ)

Դր. ՍԱՐԳՍՅԱՆ

Կյանքի ու ստեղծագործության երկար և ուսանելի ճանապարհ է անցել Մովսես Մելիքի Հայրիբեկյանը՝ Արազին։

Նա ծնվել է 1868 թ. մարտի 20-ին, Օուլավեր գյուղում (այժմ՝ Շահումյան քաղաք, Վրաստանի ՍՍՌ), ուր և անց է կացրել իր մանկությունը։ Աչք բացելով գյուղական խուլ ու հետամնաց միջավայրում՝ նա գեռես վաղ հասակից ճաշակեց անուրախ կյանքի բոլոր դառնություններ։ Ծանր աշխատանք, կիսաքաղց կյանք, վերնախավի արհամարհանք,— այս է տեսել ու զգացել Արազին իր կյանքի առաջին տարիներին, որոնք հենց սկզբից նրան համակել են խոր գժգոհությամբ անարդար շրջապատի նկատմամբ։

Իր նախնական կրթությունը նա ստացել է հայրենի գյուղի ծխական դպրոցում, ուր և ծանոթանում է հայ կլասիկների գործերին ու ժողովրդական բանահյուսության։ Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի և ուրիշ գրողների ստեղծագործությունները, ինչպես և հայ ժողովրդական ավանդություններն ու «Սասունցի Դավիթ» էպոսը առաջին անգամ նա կարդում է մայրենի լեզվի դասագրքերում, որոնցից մեկն էր հայտնի մանկավարժ Ս. Մանդինյանցի կազմած «Դյուցազնական աշխարհ» ընթերցարանը։ Հենց այստեղից էլ նրա մեջ ծնունդ առավ սերը դեպի գիրն ու գրականությունը։

Ուսման զուգընթաց Արազին օգնում էր հորը գյուղատնտեսական աշխատանքներում և հողորդակից դառնում ժողովրդի կյանքին։ Նա ականատես է լինում աշխատավոր մասսաների հարստահարմանն ու տառապանքին, նրանց աղքատությանն ու հետամնացությանը, որոնք ուժեղ ազդեցություն են թողնում նրա վրա։ Կենսական այդ դառը տպավորությունները մի կողմից, և հայ դեմոկրատ գրողների երկերին ծանոթանալը մյուս կողմից, կանխորոշում են պատանի Արազու աշխարհայացքը։

Ուսման ծարավը հագեցնելու նպատակով 90-ական թթ. սկզբին գյուղական պատանին փոխադրվում է Թիֆլիս և մեկ տարի Հավլաբարի քաղաքային դպրոցում սովորելուց հետո ընդունվում է ռեալական դպրոց (1892)։ Սկսվում է նրա մտավոր զարգացման նոր շրջանը։ Այստեղ է, որ նա մտերմանում ու սերտ բարեկամություն է հաստատում իր դասընկեր Ստ. Շահումյանի հետ և այնուհետև նրա ազդեցությամբ ներգրավվում աշակերտական ռևոլյուցիոն խմբակի մեջ։ Ռեալական դպրոցում նա ծանոթանում է ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատներ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և նրանց հետևորդ Մ. Նալբանդյանի աշխատություններ-

ին, որոնք հսկայական ազդեցություն ունեցան նրա գրական-քաղաքական հայացքների ձևավորման գործում։ Հենց այդ շրջանից էլ Արազին հաղորդակից է դառնում անլեգալ հրատարակություններին և սկսում համառորեն ուսումնասիրել մարքսիզմը, որի շնորհիվ նրա մեջ հետզհետե մշակվում է մատերիալիստական աշխարհայացք։

Երիտասարդ Արազու գաղափարական աճի ու հասունացման խնդրում առավել վճռական նշանակություն ունեցան նրա ուսանողական տարիները Պետերբուրգում, ուր նա մեկնեց 1899 թվականին և ընդունվեց տեխնոլոգիական ինստիտուտը։ Այստեղ նա մոտիկից ծանոթացավ բանվորական շարժմանն ու նրա ազդեցությամբ ծավալվող ուսանողական հուզումներին։ Ռևոլյուցիոն ոգով տրամադրված առաջավոր ուսանողները հափշտակությամբ կարդում էին Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» դիրքը, արտասահմանից անլեգալ կերպով ստացվող լենինյան «Իսկրայի» համարները, որոնք ձեռքից-ձեռք էին անցնում և տարածվում Ռուսաստանում։

Այդ ամենը ամրապնդեց Արազու հավատը բանվոր դասակարգի աղատագրական պայքարի նկատմամբ և նրան մղեց ռևոլյուցիոն գործունեության։ Լինելով զգայուն և տպավորվող անհատականություն՝ նա երիտասարդական կրքով արձագանքեց ընթացիկ քաղաքական իրադարձություններին և ակտիվ մասնակցություն ունեցավ ուսանողական ցույցերին։ Շուտով նա դարձավ մեկը առաջավոր գաղափարներով տոգորված այն ուսանողներից, որոնք իրենց կյանքի իմաստը գտան ռևոլյուցիային անձնվիրաբար ծառայելու մեջ։

Բոլշևիկյան պարտիայի գլխավորությամբ Ռուսաստանում արագորեն հասունացող ռևոլյուցիոն շարժումը իր հորձանուտի մեջ առավ նաև Արազուն, որը համարձակորեն քայլում էր ինքնակալության դեմ գրոհող մարտիկների առաջին շարքերում։ Նա ակտիվ մասնակցություն ունեցավ 1901 թ. Պետերբուրգի Կազանսկի մայր եկեղեցու հրապարակում կազմակերպված ուսանողական ցույցին, որի համար և ձերբակալվեց։ Սակայն բանտային ռեժիմը անզոր էր ընկճելու ուսանող-ռևոլյուցիոներին, որն արհամարհելով վախը՝ կոփեց իր կամքը և ստացավ մարտական մկրտություն։

Հենց այդ ժամանակից էլ Արազին ծանոթացավ պրոլետարական մասսաների բոցաշունչ երգիչ Մ. Գորկու ստեղծագործություններին, որոնցից նրա վրա առանձնապես անջնջելի տպավորություն թողեց հռչակավոր «Մրրկահավի երգը»։ «Իմ հիշողության մեջ,— տարիներ անց գրել է Արազին,— անմոռաց են մնացել 1901 թվականի ռևոլյուցիոն դեպքերը և նրանց հետ կապված Գորկու «Մրրկահավի երգը»։— Երբ մենք, ցույցին մասնակցողներս, բանտից դուրս գալուց հետո մեկնում էինք աքսորի, երկաթուղու կայարանում մեր ընկերները մեզ բաժանեցին «Ժիզն» ժուռնալի մարտի համարը, որտեղ հենց առաջին էջում տպագրված էր Գորկու «Մրրկահավը»։ Մենք զգացինք, որ դա գրված էր նոր անցած ցույցի ազդեցության տակ և չէինք սխալվում։ «Ժիզն» ամսագիրը ընդմիշտ դադարեցվեց «Մրրկահավի» տպագրության պատճառով»։

Եվ արդարև, հսկայական էր «Մրրկահավի երգի» և նրա հեղինակի ռևոլյուցիոնականացնող ներգործությունը։ Նա մարտի էր կոչում ընթերցողին և նրան դաստիարակում մոտալուտ ռևոլյուցիայի հաղթանակի հավատով։ Այդ գիտակցությամբ էլ երիտասարդությունը, այդ թվում և Արազին, ագահորեն կլանում էր Գորկու գեղարվեստական խոսքը և այն դարձնում քաղաքական պայքարի հզոր զենք։

Ռևոլյուցիոն գրականության ու թռուցիկների տարածմանն ունեցած ակտիվ մասնակցության համար Արազին երկրորդ անգամ ձերբակալվեց 1903 թվականին և աքսորվեց Անդրկովկաս՝ առնվելով ոստիկանական հատուկ հսկողության տակ։ Այդ կապակցությամբ չափազանց ուշագրավ է Թիֆլիսի ժանդարմական պահնորդական բաժանմունքի 1909 թվականի մայիսի 21-ի հետևյալ հաղորդումը. «Ս. Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Մովսես Մելիքի Հարությունովը... ոստիկանական դեպարտամենտի գործակալական տեղեկությունների համաձայն, որը հաղորդվել է 1902 թվականի նոյեմբերի 25-ի № 9/7609 գրությամբ, մտել է մայրաքաղաքում հրատարակություններ տարածող խմբի կազմի մեջ։ Այդ պատճառով էլ 1902 թվականի հոկտեմբերի 28-ին Հարությունովը ենթարկվել է խուզարկության, որի ժամանակ նրա մոտ հայտնաբերվել են մեծ թվով դանդաղ հանցագործ կոչեր և հարցաքննվել է Ս. Պետերբուրգի նահանգական ժանդարմական վարչության կողմից՝ մեղադրվելով պետական հանցագործության մեջ. նա դրվել է Ս. Պետերբուրգի ոստիկանության հատուկ հսկողության ներքո (Թիֆ-

լիսի նահանգական ժանդարմական վարչության պետի 1903 թվականի հունիսի 23-ի № 3708 հաղորդումը)»[1]։

Սակայն ո՛չ ցարական պահնորդական բաժնի կրնկակոխ հետապնդումները, և ո՛չ էլ բանտն ու աքսորը չկարողացան ընկճել Արազուն։ Վերադառնալով Կովկաս՝ նա նոր եռանդով շարունակեց մասնակցել քաղաքական կյանքին։ Այստեղ բանվորների մեջ նա ծավալեց ռևոլյուցիոն գաղափարների պրոպագանդա և նրանց ներգրավեց ցարիզմի դեմ բացահայտ պայքարի ուղին։

Ռուսական առաջին ռևոլյուցիան Արազին դիմավորեց իրադարձությունների կենտրոնում՝ Պետերբուրգում, ուր նա ականատես եղավ հունվարի 9-ի դեպքերին, ժողովրդական մասսաների զարթոնքին, որի բարձրակետը եղավ հոկտեմբերյան քաղաքական գործադուլը. «Ամեն ինչ շարժվեց,— վերհիշում է նա,— սկսեցին լույս տեսնել թերթերը առանց ցենզուրայի, հրատարակվեց բոլշևիկյան «Նովայա ժիզն» թերթը, որի մեջ տպագրվում էին Լենինի ռևոլյուցիոն ավյունով գրված հոդվածները։ Չկա ավելի վեհ բան, քան ժողովրդի զարթոնքը ռևոլյուցիայի օրերին. ասես մարդիկ բազմապատկում են իրենց ուժերը, հսկաներ են դառնում, կարծես խոսքերը կայծերով են ելնում, ընկնում հանուրի մեջ ու բռնկվում, հրդեհում. թվում է, թե ամեն մարդ հանուրը է ծնվել. այնքան դիպուկ են դալիս խոսքերը»[2]։

Ոգեշնչված ռուսական պրոլետարիատի հաղթական գրոհով՝ 1906 թ. գարնանը Արազին դալիս է Անդրկովկաս և ագիտացիոն-պրոպագանդիստական լարված աշխատանք ծավալում երկրամասի բազմազգ աշխատավորների մեջ։ Իր բանավոր ու գրավոր ելույթներով նա մերկացնում է ցարիզմի ռեակցիոն քաղաքականությունը, հակահարված տալիս բուրժուական նացիոնալիստներին և ամրապնդում մասսաների հավատը ռևոլյուցիայի հաղթանակի նկատմամբ։

Սերտ կապը ռևոլյուցիոն պրակտիկային, անձնական բարեկամությունը բոլշևիկ-բանաստեղծ Հակոբ Հակոբյանի հետ, ինչպես և բուռն հետաքրքրությունը դեպի պրոլետարական գրական շարժումն ու նրա մեծ գրոշակակիր Մ. Գորկու ստեղծագործությունը, վերջնականապես կանխորոշեցին Արազու ուղին նաև գրականության մեջ։

Շուտով նա հրապարակ իջավ որպես նորածնունդ հայ պրոլետարական գրականության առաջին շինարարներից մեկը, որն այնուհետև իր ստեղծագործական ուժերն ամբողջովին ի սպաս դրեց բանվոր դասակարգի ազատագրական պայքարին։ Արդիականության զգացողությունը և պատմական զարգացման ուղիների ճիշտ ըմբռնումը հնարավորություն տվին նրան անվարան կանգնելու գրականության պարտիականության դիրքերում։ Ի հակադրություն ռեակցիոն, անկումային գրական հոսանքների, որոնց ներկայացուցիչները փորձում էին այլասերել երիտասարդությանը, մթագնել նրա արթնացող գիտակցությունը և փակել նրա աչքերը սոցիալական անհավասարության, դասակարգային պայքարի հանդեպ, Արազին հանդես եկավ որպես ռևոլյուցիոն պրոլետարիատի փորձով ու կենդանի աշխատանքով իմաստնացած գրող, պայծառ ապագայի ջահակիր։

Այդ առումով խիստ հատկանշական է նրա գրական դեբյուտը, որ մի ուժգին հարված էր բուրժուա-նացիոնալիստական մտայնություններ։ Այն ժամանակ, երբ «հայ կյանքի ցեցերը»[3] դաշնակցական ավանտյուրիստները, փորձում էին հայ բանվորներին ու գյուղացիներին հեռու պահել ռևոլյուցիոն-դեմոկրատիայի ազդեցությունից, խափանել ռուս առաջավոր բանվոր դասակարգի հետ ստեղծվող նրանց կապերը, դարձնել նրանց բուրժուական քաղաքականության կույր գործիք, երիտասարդ Արազին իր գեղարվեստական առաջին խոսքն ուղղեց ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակցության դեմ։ Նա գրականության մեջ մտավ որպես նացիոնալիզմի անհաշտ հակառակորդ, ժողովուրդների բարեկամության ու եղբայրության անխոնջ պրոպագանդիստ։

1906 թվականի սեպտեմբերին էր, որ «Մուրճ» ամսագրում Ֆերնանդո ստորագրությամբ լույս տեսավ նրա առաջին երկը՝ «Դոն Կարապետի արշավանքը դեպի Կղերստան» վերնագրով։ Դա երգիծական մի պատմվածք է, ուր սկսնակ հեղինակը սպանիչ ծաղրի ենթարկեց դաշնակցությանը՝ բացահայտելով վերջինիս հակաժողովրդական ռեակցիոն էությունը։ Համանուն հերոսի՝ դոն Կարապետի գեղարվեստական բնութագրմամբ նա ցույց տվեց դաշնակների քաղաքական սնանկությունն ու փառասիրությունը և մերկացրեց նրանց սերտ կապը բուրժուազիայի ու կղերի հետ։ Ժողովրդի անունից հոխորտացող դոն Կարապետը զանազան մե-

[1] Վրացական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆոնդ 4, գործ 31, թերթ 409։

[2] «Սովետական Հայաստան» օրաթերթ, 1955, № 300։

[3] Ս. Սպանդարյանի արտահայտությունն է։

բենայությունների միջոցով հասնելով մեծ իրավունքների ու ձեռք բերելով հարուստ կալվածքներ, երես է դարձնում նույն ժողովրդից և ստրկահաճ համբուրում կղերապետի աջը։ Խոսքի ու գործի աղաղակող հակասություն, ցուցամոլություն, շահամոլություն ու կեղծարարություն,— ահա թե ինչով է հատկանշվում դոն Կարապետը, որի կերպարով հեղինակը անարգանքի սյունին է գամել գաշնակ ավանտյուրիստներին։

Լինելով մարքսիստական աշխարհայացքով զինված, ռուսական նոր գույն ռևոլյուցիոն ավագանում մկրտված երիտասարդության ներկայացուցիչներից մեկը՝ Արազին, այսպիսով, իր ստեղծագործական առաջին իսկ քայլից սահմանազատվում է տիրող բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսությունից և մեկընդմիշտ հակադրվում նրան։ Այդ է պատճառը, որ անցյալի լիբերալ-բուրժուական մամուլն ու քննադատությունը մերժեցին նրան տեղ տալ գրական անդաստանում։ Եվ չնայած դրան, Արազին անվհատ շարունակեց իր ուղին՝ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ։

Ոչ միայն ռևոլյուցիոն վերելքի, այլև նրան հաջորդող ռեակցիայի տարիներին, երբ ինտելիգենցիայի զգալի մասը երես դարձրեց ռևոլյուցիայից և տարվեց անկումային տրամադրություններով, Արազին անսասան մնաց պրոլետարական ղրող-ռևոլյուցիոնների մարտական դիրքերում։ Նա չթուլացող եռանդով շարունակեց բանավոր ագիտացիան բանվորների շրջանում և միաժամանակ գրեց փոքրիկ պատմվածքներ, որոնք, սակայն, լույս չտեսան գրաքննական հայտնի խստությունների պատճառով։ Բայց և այնպես նրա գրական ու հասարակական գործունեությունը այս շրջանում ևս չվրիպեց ցարական գործակալների տեսադաշտից։ 1908 թվականին Արազին երրորդ անգամ ձերբակալվեց ու նետվեց բանտ։

Ռևոլյուցիոն շարժման նոր վերելքը (1910—1914) Մ. Արազու ստեղծագործական կյանքում նշանավորվեց գաղափարա-գեղարվեստական փայլուն խիգախումներով։ Ողեշնչված բանվոր դասակարգի պայքարով, նա հրապարակ հանեց մի շարք պատմվածքներ ու արձակ բանաստեղծություններ, որոնք աչքի են ընկնում թե՛ գաղափարական նպատակասլացությամբ և թե՛ գեղարվեստական ինքնատիպությամբ։

Դրանց մեջ հեղինակը խոր հուզականությամբ վերարտադրել է տիրող կյանքի աղաղակող հակասությունները և ընթերցողի ուշադրությունը հրավիրել սոցիալական չարիքի ու նրա վերացման վրա։ Պատկերելով խավարի ու հետամնացության մեջ խարխափող աշխատավոր մասսաների ծանր վիճակը, նրանց ցասումն ու բողոքը սեփականատիրական կարգերի դեմ՝ Արազին միաժամանակ կերտեց մի շարք դրական կերպարներ, որոնք կյանքի գնով մարտնչում են մարդկային արժանապատվության, ճշմարտության ու արդարության հաստատման համար։ Հիշենք թեկուզ «Մենավոր լապտերը», «Վերջին երազ» պատմվածքները (1912), որոնց մեջ ներկայացված են բողոքող մարդկանց կյանքն ու լուսավոր երազանքը։ Եթե մի դեպքում հանձին Հեղինեի հեղինակը պատկերում է լուսավորություն տարածելու նպատակով գյուղ եկած ազնիվ ուսուցչուհու գործունեությունը, նրա ձգտումների ու իրականության միջև եղած հակասությունը, ապա հանձին ուսանող Լևոնի՝ ներկայացված է ռևոլյուցիայի գործին նվիրված մարտիկը, որը կապիտալի ստրկությունից ազատագրվելու ելքը տեսնում է բանվոր դասակարգի պայքարի մեջ։

Դաժան իրականության քննադատությունը Արազու վաղ շրջանի երկերում միահյուսված է ազատության «հրեղեն թռչունի» մասին պայծառ երազանքին։ Այդ գիտակցությամբ է հղացված նրա լավագույն պատմվածքներից մեկը՝ «Հերիաթը» (1913), ուր օգտագործելով ժողովրդական պատմելաձևը, հեղինակը վերարտադրում է պարտքերի ծանրության տակ կքած հայ գյուղացու՝ Մարգարի թշվառությունը, որից նրան պետք է ազատագրի «յոթ սարի հետևից» եկող «չորրորդ եղբայրը»՝ պրոլետարիատը։ Իր սյուժետային-գաղափարական հիմքով լինելով ռեալիստական մի գործ՝ այս, ինչպես և մի շարք ուրիշ պատմվածքներ համակված են մոտալուտ ապագայի ռոմանտիկական պաթոսով, այն խորին հավատով, որ կգա ռևոլյուցիայի հաղթանակի օրը։

Գալիքի նկատմամբ տածած այդ պայծառ լավատեսությունն առավել ցայտուն արտահայտություն է գտել նույն թվականին գրված «Կիսատ տուր» գողտրիկ պատմվածքում, որի վերնագիրը թափանցիկ կերպով ակնարկում է ռուսական առաջին ռևոլյուցիայի անավարտ մնալը։ Հեղինակը և նրա հերոսը համոզված են, որ 1905 թ. ռևոլյուցիայի պարտությունը ժամանակավոր երևույթ է. «Մի առվով որ ջուր ա գնացել, մին էլ կգնա...»,— ասում է Սարգիսը ցարիզմի կարճատև հաղթանակով հոխորտացող կուլակին։ Եվ դա ոչ թե անորոշ հույս է, այլ Վ. Ի. Լենինի խոսքերով ասած՝ «ռևոլյուցիայի կրկնության գիտականորեն հիմնավորված վստահություն»[1], որով ղեկավարվում էր ռուսական պրոլետարիատը ցարիզմի դեմ մղվող պայքարում։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 288։

Պրոլետարիատի հանճարեղ տրվեստագետ Մ. Գորկու օրինակով՝ Արազին նույնպես համարձակորեն դիմում էր այլաբանական պատկերների օգնությանը և նրանց միջոցով արտահայտում ռևոլյուցիայի մոտալուտ հաղթանակի հրճվալի զգացումը, մի այլ՝ արևոտ կյանքի երազանքը։ Դրա պերճախոս ապացույցներից է հանրածանոթ «Արևը» (1913) արձակ բանաստեղծությունը, որն իր տեսակի մեջ անկրկնելի պատկեր է։ Էմոցիոնալ խոր հագեցվածությամբ լի տողերով հեղինակը պատմում է կապիտալիստական քաղաքի արևազուրկ ու խոնավ ներքնահարկերից մեկում իր կյանքը քարշ տվող աշխատավոր մարդու ընտանիքի ողբերգությունը։ Վերևի հարկերը, այսինքն ժողովրդի արյուն-քրտինքով հղփացած հարուստները կլանելով արևի շողերը, ստվեր են ձգել գետնահարկերին և մահվան դատապարտել բանվորի «ոսկեհեր աղջկան»։ Կարիքից ու թշվառությունից հյուծված, արևի կարոտ փոքրիկ Լուսիկի մոայլ ճակատագրի մեջ խտացված է խրճիթներում ապրող նրա նման հաղարավոր աղջիկների ողբերգությունը, որի համար և հեղինակը ատելության է կոչում ընդդեմ պալատների։ Եվ այս ամենը տրված է այնքան սեղմ ու համոզիչ, որ ընթերցողը խորապես վերապրում է գրվածքի պաթոսը, նրա ներքին շունչը։ Խոսքի խնայողություն և մտքի հարստություն,— ահա թե ինչով է հատկանշվում սույն գործը, որի մեջ արևը դառնում է ազատ ու երջանիկ կյանքի խորհրդանիշ։

Վերոհիշյալ գործերը ժամանակին բարձր գնահատականի արժանացան հայ մարքսիստական քննադատության կողմից. «Արազու «Կիսատ տունը», «Արևը» և «Սպիտակ հերոսուհին» փոքրիկ պատմվածքները Բարմ և գեղեցիկ տաղանդի կնիք են կրում,— գրել է Ասր. Մռավյանը 1915 թ.։— Հաչող է մանավանդ «Կիսատ տունը»։ Արազու գույները քնքույշ են, բայց և որոշ. նրա ամեն մի տողից բուրում է աղնիվ, լավատես ձգտումներով լի տրամադրություն։ Արազին պետք է մշակի և զարգացնի իր համակրելի տաղանդը»[1]։

Արազին ակտիվ մասնակցություն ունեցավ հայ պրոլետարական գրականության առաջին ժողովածուներին («Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմ»), աշխատակցեց բոլշևիկյան մամուլին («Պայքար» և այլն), որոնց էջերում հրապարակած երկերով պայքարում էր իմպերիալիստական սպանդի դեմ ու եղբայրության կոչ անում տարբեր ազգի աշխատավորներին։ Դրա լավագույն արտահայտություններից է «Կարմիր համբույրը» (1915), ուր հեղինակը ամբողջ կրքով դատապարտում է ժողովրդասպան եղեռնը և դրանից դուրս գալու ելքը տեսնում ռևոլյուցիոն ճանապարհով կապիտալիզմը խորտակելու մեջ։ Պատմվածքի հերոսը, որ ծանր վիրավոր է, ռազմադաշտում չուր փնտրելիս՝ հակառակորդի դիակների մեջ հանկարծ գտնում է իր օտարազգի ընկերոջը և արյունոտ համբույր տալով նրան, կոչ անում ամրապնդել ընկերությունը, երնել դասակարգային պայքարի։ Նա մեռնում է այն խորին հավատով, որ պատերազմի դաշտում ընկածները ոտքի կելնեն ու «կբայլեն դեպի քաղաքները քարահատակ.... շռինդ ու շրխկոցով կբանան փակ դռներն ու ներս կտանեն ցրտահար, արյունոտ ճշմարտությունը»։

Այսպիսով, նախառևոլյուցիոն շրջանի իր երկերում Արազին ռևոլյուցիոն մարքսիզմի դիրքերից մերկացրեց տիրող կյանքի հակամարդկային բնույթը, բուրժուական հասարակության գայլաբարո օրենքները, որոնք աշխատավորի կյանքը դարձնում են դժոխք։ Ժողովրդի անարև կյանքի պատկերումը, սակայն, նրա մոտ միահյուսված է պրոլետարիատի ազատագրական պայքարին, որի հաղթանակի մեջ էր նա տեսնում մարդկության ազատ ու երջանիկ ապագան։ Այստեղից էլ՝ նրա երկերի ռեալիստական կոնկրետ բովանդակությունը, գաղափարական սուր կոնֆլիկտները, հնի դեմ ծավալվող նորի պայքարը, որ զարգանում է հաղթանակի հեռանկարով։ Ընթերցողի առաջ ելնում են բանվոր դասակարգի պայքարով ոգեշնչված, անընկճելի կամքի տեր հերոսներ, որոնք իրենց խառնվածքով ու հետապնդած նպատակներով դառնում են պատմական պրոգրեսի արտահայտիչներ։ Դրանք համակված են ռևոլյուցիոն պայքարի հերոսական ռոմանտիկայով, լուսավոր ապագայի պայծառ երազանքներով, ուստի և պատրաստ են հաղթահարելու ամեն տեսակի դժվարություններ հանուն վերջնական նպատակի։ Պրոլետարական ռևոլյուցիայի անխուսափելի հաղթանակի հավատով տոգորված Արազու այդ ստեղծագործությունները, որոնցով հեղինակը պատվավոր տեղ նվաճեց սոցիալիստական ռեալիզմի գրականության հայկական հատվածում, ժամանակին ուժեղ ազդեցություն ունեցան ընթերցողների վրա։ Նրանք կարևոր դեր խաղացին հայ աշխատավորների ռևոլյուցիոն դաստիարակության գործում և շատ կողմերով այսօր էլ պահպանել են իրենց ներգործող նշանակությունը։

[1] «Պայքար», 1913, № 3։

* * *

Արազու ստեղծագործական կյանքում նոր և բեղմնավոր էտապ նշանավորեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որի հաղթանակին էր ձգտում նա իր գրական-հասարակական ողջ գործունեությամբ։

Մեծ Հոկտեմբերի հաղթանակի մեջ նա տեսավ իր լավագույն երազանքների իրականացումը, ուստի և անվարան կանգնեց նրա փրկարար գրոշի տակ։ Սովետական կարգերի հաղթանակը Անդրկովկասում նրան հանեց մենշևիկյան բանտից և մեկընդմիշտ ազատագրեց բուրժուական հասարակության մեջ արհամարհված ու անապահով գրողի դառը ճակատագրից։ Նրա առաջ բացվեցին ստեղծագործական լայն հեռանկարներ և նա հնարավորություն ունեցավ ամբողջովին նվիրվելու իր կոչմանը՝ գրականությանը։

Արազին ամենաակտիվ մասնակցություն ունեցավ սովետահայ գրականության սկզբնավորման ու զարգացման գործին։ Հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հ. Հակոբյանի հետ միասին նա 1922 թ. Թիֆլիսում կազմակերպեց Վրաստանի պրոլետ գրողների հայկական սեկցիան, որն ունեցավ իր օրգանը՝ «Դարբնոց» ամսագիրը։ Վերջինս, որի խմբագրական կազմի մեջ ընտրվեց և Արազին, ըստ էության սովետահայ գրական-գեղարվեստական առաջին պարբերականն էր, որ բուռն թափ հաղորդեց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական հայ կուլտուրային։ Ոգևորված այդ կուլտուրայի և նրա անբաժան մասը կազմող գրականության զարգացման հեռանկարներով՝ Արազին նշված ամսագրի առաջին համարներից մեկում գրել է. «...պրոլետարական բանաստեղծությունը ասպարեզ է գալիս իր նոր, այրող ու ցնցող ճշմարտությամբ, իր հզոր կռվի երգերով և ապագայի մարգարեական հեռանկարներով։ Եվ քանի համաշխարհային պրոլետարիատի պայքարը կծավալվի, այնքան ավելի մասսաները կմերձենան իրենց հարազատ երգերին»[1]։

Այս խորին համոզմամբ էլ նա երիտասարդական ավյունով ձեռնամուխ եղավ ստեղծագործական լարված աշխատանքի, որի առանցքը դարձավ սովետական արդիականությունը։ Ազատագրված ժողովրդի նոր կյանքն ու պայքարը, սոցիալիստական շինարարությունն իր վերելքով անմիջապես գրավեցին մեր հեղինակի ուշադրությունը և դարձան նրա ստեղծագործական ներշնչումների անսպառ աղբյուրը։ «Մարտակոչ», «Խորհրդային Հայաստան» և այլ պարբերականներում իրար ետևից լույս տեսան նրա պատմվածքներն ու ակնարկները, նովելներն ու հոդվածները, որոնցով Արազին ձգտում էր հաստատել նոր կյանքը, նպաստել ձևավորվող սոցիալիստական անհատականության կազմավորմանը։

Բնորոշ է նաև, որ անցյալի բուրժուա-նացիոնալիստական քննադատության կողմից հալածված գրողը միայն սովետական կարգերի օրոք հնարավորություն ունեցավ հրատարակելու իր պատմվածքների առաջին ժողովածուն (1923)։ Այնուհետև գրեթե յուրաքանչյուր տարի լույս տեսան նրա երկերի ժողովածուները, որոնց մեջ բազմակողմանի արտացոլում են գտել մեր դարաշրջանի տիպական երևույթները։

Հավատարիմ մնալով իր գրական նախասիրությանը՝ պատմվածքի ժանրին, Արազին գրողքաղաքացու հայրենասիրական ակտիվությամբ արձագանքեց հաղթանակած ժողովրդի պայքարին ու շինարարությանը և գեղարվեստորեն իմաստավորեց տեղի ունեցող իրադարձությունները։ Ընդլայնվեց նրա երկերի թեմատիկան, փոխվեց ու հարստացավ նրա հերոսների կազմը։ Հնի խորտակումն ու նորի կառուցումը, պատմա-ռևոլյուցիոն անցյալն ու սոցիալիստական շինարարության հերոիկան, նոր մարդու ծնունդն ու հոգևոր աճը, նրա հարաթափ մղումը դեպի կատարելությունը,— այս ամենը դարձան Արազու նոր շրջանի ստեղծագործությունների առաջատար բովանդակությունը։ Նրա տեսադաշտից դուրս չմնաց տակավին գաղութակալության լծի տակ տառապող Արևելքի ժողովուրդների կյանքը, գիշատիչ մեթոդներով շահագործվող աշխատավորների դառնակսկիծ վիճակը կապիտալի աշխարհում, որի մերկացումը զգալի տեղ էր գրավում տվյալ շրջանի սովետահայ գրականության մեջ։

«Արևելյան մոտիվներ» ընդհանուր խորագրով պատմվածքներում Արազին բացում է թանձր խավարով ծածկված իրականության վարագույրը և ցույց տալիս ծայրահեղ կարիքի ու թշվա-

---

[1] «Դարբնոց», Թիֆլիս, 1922, № 25։

ության մեջ տառապող աշխատավորների իրավազրկությունը։ Ընթերցողի առջևից «անքալով ու հառաչելով» անցնում են տաժանակիր աշխատանքում հյուծված և արհեստանոցից դուրս շպրտված բանվոր Մահմեդը՝ իր որդուն շալակած («Խալիշայի երգը»), պարսիկ վաճառականի արծաթը անգլիական բանկ փոխադրող բեռնակիր, հիվանդ Հասանը, որ տենչում է «քյասիբների իշխանություն» և երազում է անցնել այս ափը («Արծաթի տակ»)։ Ըստ որում յուրաքանչյուր դեպքում հեղինակը կարողացել է չափի նուրբ զգացումով օգտագործել ժողովրդական խոսվածքն ու բանահյուսության տարրերը, որոնք շարադրանքին հաղորդում են կենդանություն, սեղմություն։ Կոլորիտային այդ պատկերները ևս թափանցված են հոգեկան ազնիվ պոռթկումներով, վարակիչ հուզականությամբ։

Նույնը կարելի է ասել այդ շրջանում ստեղծված «Կոմունարներ» պատմվածաշարքի մասին, որով հեղինակը վերարտադրում է աշխարհի ռևոլյուցիոն վերափոխման համար պայքարող մարտիկների անվեհերությունը, նրանց անհաղթահարելի կամքն ու վճռականությունը։ Վերակենդանացնելով Փարիզյան Կոմունայի հերոսական դրվագները՝ Արազին ըստ էության արձագանքում էր քաղաքացիական կռիվների իրադարձություններին և սովետական մարդկանց դաստիարակում հայրենասիրության, հերոսության ու բարձր սկզբունքայնության ոգով։

Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին գրած իր մի շարք պատմվածքներում նկարագրելով ազատագրված ժողովրդի նոր կյանքը, Արազին միաժամանակ ռեալիստական արվեստի ուժով մերկացնում է հին աշխարհի վերջին ներկայացուցիչներին։ Դրանք ջախջախված դասակարգի շառավիղներ են, որոնք կորցնելով իրենց ոտքի տակի հողը՝ ապրում են մահացման դանդաղ պրոցես։ Այդպիսի վիճակում են հնավաճառ դարձած ծեր գեներալը («Անցյալի նիրհը»), նախկին հարուստ Աղասյանը («Անցվորը»), հին ժամացույցը վաճառքի հանող պառավ կինը («Հին ժամացույցը»), իր վագեմի հարստությունը անրջող և իմպերիալիստների գալուն սպասող սեփականատերը («Դեղին նստարանի վրա»), պաշտոնաթող չինովնիկը («Տեսիլ») և այլն։ Երեկվա այդ տերերը այսօր դարձել են կենդանի դիակներ, որոնց գեղարվեստական բնութագրման մեջ հեղինակը դրսևորել է հումորի փայլուն զգացողություն։

Հակառակ կործանման դատապարտված այդ «հերոսների» բարոյական անկման՝ սովետական կարգերը կյանքի են կոչել երեկվա արհամարհված ու ճնշված աշխատավորներին, որոնք հասարակական նոր հարաբերությունների պայմաններում վերափոխվում ու ձեռք են բերում իրենց կորցրած պատիվը։

Այդ առումով առանձնապես բարձրարժեք գործ է Արազու «Ընկեր Մուկուչը» պատմվածքը (1924)։ Հեղինակը գեղարվեստական համոզչությամբ բացահայտում է իր հերոսի հոգևոր աճման բարդ պրոցեսը և այն դիտում վերընթաց զարգացման մեջ։ Բարձրանալով կյանքի հատակից՝ Մուկուչը բանվորական կոլեկտիվի շարքերում ասպիճանաբար վերածնվում ու դառնում է մարդկային արժանապատվությամբ հպարտ սովետական ակտիվ քաղաքացի։ Նրա մեջ ծնվում են կոլեկտիվիստական մտածողություն, պատասխանատվության գիտակցություն և նոր վերաբերմունք դեպի աշխատանքն ու աշխատավորը։ Այժմ նա զգում է իր հարազատությունը շրջապատի հանդեպ և աշխատում է կրկնապատկված եռանդով, ակտիվորեն մասնակցում բոլոր միջոցառումներին։ Հասարակ ու արհամարհված պահակից նա դառնում է «ընկեր Մուկուչ» և ժողովներում նստում նախագահության սեղանի շուրջ, համարձակ ելույթներ է ունենում քաղաքական հարցերի մասին և արժանանում իր ընկերների խրախուսանքին։ Հեղինակին հաջողվել է պատճառաբանել իր հերոսի այդօրինակ կերպարանափոխությունը և նրա մեջ մարմնավորել ժամանակի շունչը, սոցիալիստական առաջընթացի բովանդակությունը։ Ուստի բնավ պատահական չէ, որ այդ պատմվածքը ժամանակին արժանացավ Մ. Գորկու նման խստապահանջ արվեստագետի ջերմ հավանությանը։ 1929 թվականին աչքի անցկացնելով «Советская страна» գեղարվեստական ալմանախի նյութերը՝ Մ. Գորկու ուշադրությունը գրավեցին վրաց գրող Սուլիաշվիլու և Արազու պատմվածքները. «Բացառությամբ Սուլիաշվիլու և Արազու պատմվածքների,— գրել է Գորկին ալմանախի խմբագրական հանձնաժողովի անդամներին,— բոլոր մյուսները գրված են այնպես, կարծես թե նրանց հեղինակները XIX դարի 70-ական թվականների օդով են շնչում...»[1]։

Եվ արդարև, արդիականության զգացողությունը, Գորկու դիպուկ արտահայտությամբ ասած՝ «դարաշրջանի ռևոլյուցիոն հրամանին»[2] ունկնդրելը Արազու ստեղծագործական խառնը-

[1] Տե՛ս „Коммунист“ օրաթերթ, 1941, № 141։

[2] Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 364։

վածքի բնորոշ գծերից է, որ նա պրսևորել է սկզբից ևեթ։ Նրան խորթ է պասսիվ, հայեցողական վերաբերմունքը, որ տանում է դեպի անդարձ մոռացություն։ Թե՛ իբրև քաղաքացի և թե՛ իբրև գրող նա ապրել է իր ժամանակի պատմական զարգացման առաջավոր տենդենցներով և դրանք արտահայտել արթուն մտքով, զգաստ դիտողականությամբ։

Այդ են վկայում նաև «Տրակտորը» (1926), «Անխուսափելին», «Աչքը վախեցած Հանեսը» (1927) և էլի ուրիշ պատմվածքներ, որոնց մեջ պատկերված են գյուղի սոցիալիստական վերակառուցման ընթացքը և այդ ֆոնի վրա նոր մարդու բնավորության ու հոգեբանության կազմավորման բարդ պրոցեսը։ Մեծ արվեստով է գծված Հանեսի կերպարը, որը շատ կողմերով հար և նման է Մուկուչին։ Վերջինիս պես աչք բացելով կարիքի ու զրկանքի մեջ, ճաշակելով անուրախ կյանքի զառնությունները՝ շրջապատի կողմից արհամարհված այդ հողազուրկ գյուղացին միայն Սովետական իշխանության շնորհիվ է հասնում ազատ և ինքնուրույն կյանքի։ Անցյալում կուլակների սպառնալիքից աչքը վախեցած Հանեսը այժմ վանում է իրենից երկչոտությունն ու երկյուղը և սպանում նախկին վաշխառու Սիմոնին, որ այնքան դառնություններ է պատճառել իրեն և իր նմաններին։ Հանեսի այդօրինակ արարքով հեղինակը բացահայտել է դասակարգային պայքարի այն լարված մթնոլորտը, որ ուղեկցում էր երկրի սոցիալիստական վերակառուցմանը։

Նկարագրելով նորի, առաջավորի հաղթանակը գյուղում և քաղաքում՝ Արազին միաժամանակ ցույց է տվել հին, մեռնող ուժերի կատաղի դիմադրությունը։ Հատկապես քսանական թվականների վերջերին գրած իր մի շարք երկերում նա ցայտուն ընդհանրացումներով մերկացրել է ջախջախված դասակարգերի թշնամական, հուսահատ ճիգերը մեր հաղթական առաջընթացի ճանապարհին։ Դրան են նվիրված «Փուշ Աբելը» (1929), «Հազար գլխանի» (1931), «Մոլախոտը» (1932), «Գայլերի ճամփին» (1934) և այլ պատմվածքներ, որոնց մեջ արտահայտություն է գտել սոցիալական տարբեր ուժերի գոտեմարտը։ Հնի և նորի այդ պայքարը, որ դրսևորվում է տարբեր ձևերով ու միջոցներով, հեղինակի մոտ պատկերված է կենսական խոր ճշմարտացիությամբ։ Նա ցույց է տալիս, թե ինչպես ներքուստ սնանկ ու կործանման դատապարտված բուրժուա-կալվածատիրական տարրերը անդուլ չարությամբ ամեն կերպ փորձում են վիժեցնել սոցիալիզմի կառուցումը գյուղում։ Հարստանալու ծարավը, սեփականատիրական մոլությունը նրանց դարձրել է վայրենի էգոիստներ ու մարդատյացներ, որոնք վրեժխնդրությունից մղված գաղտնի, թե բացահայտ դիմում են գավադիր գործունեության։ Այդպիսի տիպերից են Աբելը, Մեժումյանը, Թավարբեկյանը, Ղահրամանյանը և ուրիշներ, որոնցից յուրաքանչյուրը թողարկելով իր գիշատիչ էությունը՝ աշխատում է վնասել ընդհանուրի գործին։ Սակայն նոր կյանքի կառուցման հաղթական պրոցեսում մերկացվում ու ջախջախվում են նրանք։ Անցյալի հետ իրենց կապերը չխզած այդ տարրերի նկատմամբ հեղինակը բանեցնում է այրող երգիծանք, որը առավելագույն ուժով բացահայտում ու ընդգծում է նրանց դատապարտվածությունը, տրամաբանական վախճանի հասցնում նրանց կոմիկական վիճակը։

Ժողովրդական կյանքի հեպայթաթի պրոցեսները պատմական կոնկրետությամբ պատկերելու պահանջը Արազուն մղեց դեպի գեղարվեստական լայն կտավներ ստեղծելու ուղին։ Արձակի փոքր ձևերի՝ պատմվածքի, նովելի, ակնարկի վարպետը շուտով հանդես եկավ վիպակներով, որոնց մեջ հեղինակին զբաղեցնողը դարձյալ նոր մարդու պրոբլեմն է, նրա հոգեկան աշխարհի ու բարոյականության ձևավորման բարդ պրոցեսը։ Այդ առնչությամբ մասնավորապես արժեքավոր է «Լուսնի շողերով» վիպակը (1931), ուր դասակարգային պայքարի ֆոնի վրա ներկայացված են ուսանող պրակտիկանտներ Գուրգենն ու Հասմիկը, որոնք համատեղ աշխատանքի ընթացքում մտերմանում են և իրենց ամբողջ ուժերը նվիրաբերում նոր կյանքի շինարարությանը։ Նրանք ակտիվ մասնակցություն են ունենում գյուղի կոլեկտիվացմանը, մերկացնում թշնամական տարրերի ու նրանց համախոհների մեքենայությունները և դառնում նորի, առաջավորի կրքոտ պաշտպաններ։ Հեղինակը, սակայն, չի բավարարվում իր երիտասարդ հերոսների ներկա կյանքի նկարագրությամբ միայն, այլև փորձում է տալ նրանց վաղվա օրը։

Արազու հաջորդ վիպակը «Ջրվեժի ցոլքում» երկն է (1933)։ Այստեղ ևս հեղինակին հետաքրքրողը սոցիալիստական շինարարության հիման վրա նոր մարդու կերպավորումն է, որ տրված է տեխնիկական հին ինտելիգենցիայի վերափոխման պատկերումով։ Վիպակի գլխավոր հերոսը ինժեներ Թառայանն է, որը լինելով անցյալից եկած մասնագետ՝ բնականաբար իր հետ բերել է բուրժուական հոգեբանությանը հատուկ գծեր, որոնք և խանգարում են նրան ճիշտ ըմբռնելու կյանքը, զգալու նորի շունչը։ Նա արհամարհանքով է վերաբերվում աշխատանքի փորձ չունեցող երիտասարդ ուժերին, հաշվի չի առնում կոլեկտիվի կարծիքը, խուսափում է քննադատությունից և ըստ էության իրեն հակադրում է մասսային։ Սակայն սովետական խանդավառ

երիտասարդության ներկայացուցիչները ակտիվ դեր են խաղում Թաղյանի վերափոխման գործում։ Նա դառնում է նոր մարդ և իր անձնական երջանկություններ գտնում հանրաշահ գործունեության, հասարակական ակտիվության մեջ։

Արազու սովետական շրջանի երկերի մի զգալի մասը նվիրված է պատմա-ռևոլյուցիոն անցյալին, որի գեղարվեստական մեկնաբանությամբ նա ձգտել է երիտասարդ սերնդին դաստիարակել նոր կյանքին, ժողովրդին նվիրված լինելու, առույգության ու հերոսության ոգով, դժվարությունները հաղթահարելու հաստատակամությամբ։ Այդ թեմայով են գրված «Կարմիր հարսնացուն» (1927), «Խորհրդային առավոտ» (1932), «Կամուրջը» (1933), «Ակունքներ» ժողովածուն (1938) և էլի ուրիշ գործեր, որոնց մեջ ցայտուն պատկերում են գտել մոտավոր անցյալի ռևոլյուցիոն դրվագները, սովետական կարգերի հաղթանակի համար մղված մարտերը, հարազատ Կարմիր Բանակի ազատագրական միսիան և այլն։ Ըստ որում, գրեթե բոլոր դեպքերում էլ հեղինակը ելնում է իր կենսապատմական տվյալներից, որոնք հարուստ նյութ են տալիս այդ ուղղությամբ։

Մեծ է Արազու նմանօրինակ ստեղծագործությունների դաստիարակչական նշանակությունը։ Որպես պատմական վավերագրեր դրանք ցույց են տալիս, թե ինչպես են աճել, հասունացել ռևոլյուցիայի կենսական ուժերը, ինչպիսի զոհողությունների գնով է ձեռք բերվել այսօրվա ազատ ու երջանիկ կյանքը։ Հենց դրանումն է այդ գործերի պատմական ու ճանաչողական արժեքը, նրանց համակող շունչը։

Բայց այդ տեսակետից առավել նշանակալից է Արազու ծավալուն երկը՝ «Այրվող հորիզոն» վեպը, որի առաջին մասն է առայժմ հրատարակված (1940)։ Այստեղ ընթացիկ դարասկզբի քաղաքական իրադարձությունների ֆոնի վրա հեղինակը ձգտել է պատկերել ժողովրդի ռևոլյուցիոն զարթոնքը, ազատագրական շարժման բուռն վերելքը Ռուսաստանում, երբ ուսանողությունը օպոզիցիոն դիրք գրավեց ցարիզմի նկատմամբ և ակտիվ մասնակցություն ունեցավ ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին ծավալվող անցքերին։ Որպես այդ դեպքերին ժամանակակից ու մասնակից՝ Արազին ինքնակենսագրական փաստերի գեղարվեստական ընդհանրացման ճանապարհով վերարտադրում է նկարագրվող ժամանակաշրջանի ընդարձակ պատկերը, մասնավորապես Պետերբուրգի ուսանողության ռևոլյուցիոն գործունեությունը, որին ջերմորեն արձագանքեցին նաև հայ առաջավոր ուսանողները։

Ընդգրկման ծավալով և առաջադրած հարցերով դա մի լայնակտավ երկ է, ուր բոլշևիկյան պարտիականության դիրքերից հեղինակը առավելապես ձգտել է արտացոլել ռուս առաջավոր հասարակական մտքի հետ սերտորեն կապված հայ ինտելիգենցիայի կյանքն ու գաղափարական հասունացումը, նրա ռևոլյուցիոն պայքարի ուղին։ Վեպում ստեղծված են մի շարք ուշագրավ կերպարներ (Լևոնյան, Գարունյան, Վերա, Պետրով և այլն), որոնցով բացահայտված է ինքնակալության դեմ տարվող պայքարի համաժողովրդական բովանդակությունը, նրա ինտերնացիոնալ բնույթը։ Չնայած ակնհայտ թերություններին, այս երկը լուրջ նվաճում է հենց հեղինակի համար, որն իր երկարատև ստեղծագործական կյանքում առաջին անգամ հանդես եկավ այնպիսի սի բարդ ու դժվարին ժանրով, ինչպիսին է վիպասանությունը։

Ինչպես մեր կյանքի բոլոր էտապներում, այնպես էլ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Արազին ծավալեց գրական-հասարակական բեղուն գործունեություն։ Երիտասարդական ավյունով նա հայրենաշունչ ելույթներ ունեցավ բանվորական ու կոլտնտեսային մասսաների առաջ, զորամասերում, հրապարակեց մարտական հոդվածներ ու ակնարկ-պատմվածքներ, որոնցով մերկացրեց ֆաշիզմի արյունարբու էությունը և ոգեշնչեց մեր ժողովրդին թշնամու դեմ մղվող ազատագրական պայքարում։

Այս շրջանի նրա գեղարվեստական երկերը, որ լույս տեսան «Հայրենիքի կանչը» (1942) և «Անհաղթները» (1944) խոսուն վերնագրերը կրող ժողովածուներում, դրսևորում են հեղինակի հայրենասիրությունը, նրա սերտ կապը հարազատ ժողովրդի կյանքին ու պայքարին։

Հիտլերյան հորդաների ուխտադրուժ հարձակումից մեկ շաբաթ անց նա գրեց «Հայրենի հողը» արձակ բանաստեղծությունը, որն այրի է բնկնում ջերմ պաթոսով։ Հայրենի հողի մասին ժողովրդական իմաստությունը Արազու գրչի տակ մարմնավորվել է սովետական հայրենասիրության վսեմ գաղափարով։ Իր ոգեմաճակատ տարած մի պտղունց հողի մեջ հայ մարտիկը տեսնում է բովանդակ սոցիալիստական հայրենիքը, եղբայրական սիրով միավորված բազմազգ ժողովուրդների անխախտ ընտանիքը, որը և ուժ ու եռանդ է տալիս նրան մարտնչելու վայրագ թշնամու դեմ։

Ռազմաճակատային կյանքի պատկերմանը զուգընթաց Արաղին անդրադարձել է նաև պարտիզանական սխրագործություններին, որոնց գեղարվեստական ցուցադրմամբ բացահայտել է ժողովրդական վրիժառուների կիզիչ ատելությունը դեպի թշնամին և անսահման նվիրվածությունը Սովետական Հայրենիքին։ Մեծ կրքով են շնչում նրա «Խնճույքը», «Հրամանը», «Ալեքը» և «Ատելություն» պատմվածքները։

Կրակի առաջին գծում թշնամու դեմ կռվող մարտիկներից ետ չեն մնում թիկունքի աշխատավորները, որոնց կյանքն ու աշխատանքային առօրյան են պատկերված Արաղու մի շարք ստեղծագործություններում («Աշխենը», «Վերգինեն», «Պրոֆեսորը» և այլն)։ Նրանք աշխատում են «ամեն ինչ ռազմաճակատի համար» նշանաբանով։ Յուրաքանչյուրն իր անձնական կյանքի իմաստը տեսնում է հայրենիքին հավատարմորեն ծառայելու, մեր հաղթանակը կոփելու մեջ. Այդպիսի ազնիվ հայրենասերներ են Աշխենը, Վերգինեն, պրոֆեսոր Մելյանը, որոնցից յուրաքանչյուրը է՛լ ավելի մեծ եռանդ, նախաձեռնություն ու ակտիվություն է ցուցաբերում հայրենիքին սպառնացող վտանգի ծանր օրերին։

Իհարկե, պատերազմի տարիներին Արաղու գրած պատմվածքներն ու ակնարկները ևս զերծ չեն որոշ թերություններից, որոնք թերևս արդյունք են շտապողականության, բայց տվյալ դեպքում դա չի կարևորը, այլ այն անվրեպ կրակը, որ նա բացեց թշնամու դեմ։ Դրանումն է հեղինակի մարտական ծառայությունը հայրենիքին։

Պատերազմի հաղթական ավարտից հետո Արաղին իր բոլոր ուժերը նվիրաբերեց կոմունիզմի շինարարության մեծ գործին։ Նա հրապարակեց մի շարք նոր ստեղծագործություններ, որոնց մեջ առավել ուշագրավ «Հաղթանակի ծիլեր» վեպն է (1950)։ Այնուհետև գրեց հրապարակախոսական մի շարք հոդվածներ, որոնցով իր տեղը գրավեց ստեղծարար աշխատանքի ու խաղաղության համար մղվող համաժողովրդական պայքարի ավանգարդում։

Մեծ են ու նշանակալից բազմավաստակ գրողի մատուցած ծառայությունները սովետահայ գրականությանը։ Նա շատ բան է արել մեր ժողովրդի համար հոգևոր կուլտուրայի առատություն ստեղծելու նպատակով։ Նրա տեսադաշտից դուրս չեն մնացել նույնիսկ մեր մանուկները, որոնց մասին և որոնց համար նա գրել է բազմաթիվ հետաքրքրական պատմվածքներ, նպաստել նոր սերնդի կոմունիստական դաստիարակության գործին։ Հիշատակության արժանի են «Փոքրիկ հերոսը», «Ես հեղափոխական եմ», «Հերոս կոմունարը», «Հերոս կարենը», «Փոքրիկ շինարարները», որոնցից մի քանիսը զարդարում են մայրենի լեզվի դասագրքերը։ Արաղին այդ պատվին արժանացել է պատմելու իր տաղանդով, նյութը հետաքրքիր դարձնելու հմտությամբ։ Անվիճելի է, որ նա լավ ծանոթ է մանկական աշխարհին, գիտե մատաղ սերնդի հակումները, ուստի և կարողանում է համոզչությամբ ներկայացնել տարբեր տարիքի երեխաների հոգեբանությունն ու խառնվածքը։

Վերջապես չի կարելի չնշել Արաղու դերը մեր թարգմանական գրականության հարստացման գործում։ Բավական է ասել, որ նրա գրչին է պատկանում Մ. Գորկու ինքնակենսագրական հռչակավոր տրիլոգիայի («Մանկություն», «Ծառայության մեջ» և «Իմ համալսարանները») թարգմանությունը, որ ջերմորեն ընդունվեց հայ ընթերցողների կողմից։

Ըստ արժանվույն գնահատելով Արաղու գրական-հասարակական գործունեությունը՝ Սովետական կառավարությունը անվանի գրողին պարգևատրել է Պատվո Նշան, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաններով ու մեդալներով։ Ռևոլյուցիոն շարժումներին ունեցած ակտիվ մասնակցության համար ռուսական առաջին ռևոլյուցիայի հիսնամյակի առթիվ նա արժանացավ կառավարական բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի։ Այդ փաստն ինքնին դրսևորում է մեր ժողովրդի խիզախ ու տաղանդավոր զավակի ազնիվ նկարագիրը։

Այսօր էլ, չնայած իր պատկառելի տարիքին, Արաղին ապրում է բեղուն ստեղծագործական կյանքով։ Ներկայումս նա աշխատում է «Իսրայել Օրիի» պատմավեպի վրա, որտեղ ձգտում է գեղարվեստական լայն կտավով պատկերել հայ ժողովրդի ազատագրական շարժման վերելքը XVII դարի վերջին և XVIII դարի առաջին կեսին և հայ-ռուսական բարեկամությունը, որն այնքան բախտորոշ նշանակություն ունեցավ մեր ժողովրդի համար։ Վեպի հրապարակված հատվածները ցույց են տալիս, որ տակավին թարմ և կարելիություններով լի է նրա հեղինակի գեղարվեստական վրձինը։

ПРОЛЕТАРСКИЙ ПИСАТЕЛЬ-РЕВОЛЮЦИОНЕР

Гр. А. САРКИСЯН

(Р е з ю м е)

Имя М. Арази тесно связано с историей возникновения и развития армянской пролетарской, социалистической литературы.

Получив революционное крещение в среде передовой русской молодежи, он с первых же шагов своей литературной деятельности выступил против буржуазно-националистической идеологии и явился выразителем настроений трудовых масс. Его первое произведение «Поход Дон-Карапета в страну клерикалов», напечатанное в 1906 г. в журнале «Мурч» («Молот»), представляет собою сатирический рассказ, направленный против контрреволюционной партии дашнакцутюн.

Творчество Арази стало бурно развиваться в период нового подъема революционного движения (1910—1914), когда появились его произведения «Одинокий фонарь», «Последний сон», «Сказка» и др., проникнутые страстной критикой современной ему действительности и полные революционного пафоса.

По примеру М. Горького, Арази при помощи аллегорических картин также выразил ликующее предчувствие близкой победы революции и мечту о наступлении иной, солнечной жизни. Этим настроением проникнуты рассказы «Солнце», «Недостроенный дом» и др., которые в свое время удостоились высокой оценки со стороны армянской марксистской критики.

Новый плодотворный этап в творчестве писателя начался со времени Великой Октябрьской социалистической революции.

Гибель старого мира и создание нового, историко-революционное прошлое и героика социалистического строительства, рождение нового человека и его духовный рост — таково содержание произведений Арази после революции.

Стремление представить грандиозный подъем народной жизни в его исторической конкретности привело Арази на путь создания крупных полотен. Вскоре он выступил с повестями «В лунном сиянии» и «В блеске водопада»; в последующем он написал роман «Пылающий горизонт», где на широком фоне событий 900-х годов показано участие передовой армянской интеллигенции в общерусском революционном движении.

В годы Великой Отечественной войны Арази развил активную общественно-литературную деятельность. В ряде рассказов и в своих патриотических выступлениях он вскрывал звериную сущность фашизма и звал народ к освободительной борьбе против врага.

В послевоенные годы М. Арази продолжает неустанно работать,— пишет роман «Победные ростки», выступает с публицистическими статьями.